

Ս. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն

ԺԴ—ԺԶ դարերում Հայաստանում օտար նվաճողների վարած պատերազմների, ասպատակությունների, կոտորածների, կողոպուտների և կամալականությունների եղրափակիչ վուլը և հայ ժողովրդի դժոխային վիճակի գաղաթնակետը կարելի է համարել ԺԷ դարի առաջին երեք տասնամյակը: ԺԷ դարը Հայաստանում սկսվեց ոչ սովորական պատերազմներով, որոնք կարճատև ընդմիջումներով և փոփոխակի հաջողություններով տևեցին մինչև 30-ական թվականները: Դարավոր երկու ախոյանների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի պատերազմական թատերաբեմը գերազանցապես Հայաստանն էր: Պատերազմական գործողություններին զուգընթաց իրագործվեց Արարատյան դաշտի և հարակից երկրամասերի բնակչության բռնագաղթը Պարսկաստան: Սա եղավ հայ ժողովրդի համար պատերազմի հետ կասկած գործողությունների նոր հետևանքը: Սակայն դեպքերի ընթացքը դրանով չավարտվեց: Հաջորդ պատուհասը, մի քանի տարի տևած սովն էր ու դրա հետ լծորդված զանգվածային մահտարածամը, որն իր հերթին էր ամայացնում երկիրը: Եվ եթե այս ամենից հետո դեռ մնացել էր ասպատակությունների և ավերածությունների պակաս, դա էլ լրացրեց պատմության մեջ հայտնի ջալալիների ավերիչ շարժումը: Այդ ամենի արդյունքն էր, ահա, որ մարդաթափ եղավ Հայաստանի ղգալի մասը, արտագաղթի հարկադրելով հայ ժողովրդին դեպի հարևան կամ հեռավոր երկրներ: Խաչաձևվող պատուհասների այս իրադարձություններով սկսվեց ԺԷ դարը Հայաստանում, որոնք ավելի քան երեք տասնամյակի հարստություն ունեցան:

Այս տարիներին վերաբերող պատմական գլխավոր աղբյուրները երկուսն են՝ Գրիգոր Դարանաղեցու ժամանակագրությունը¹, և Առաքել Դավրիժեցու Պատմությունը²: Դրանցից առաջինը դեպքերի ժամանակակիցն է և իր նկարագրած շատ եղելությունների անմիջական ականատեսը: Երկրորդը՝ թեպետ և ժամանակով փոքր-ինչ հեռու է կանգնած իրադարձություններից, սակայն իր աշխատության մեջ կանգ է առնում դրանց մանրամասնությունների վրա, շարադրանքի ընթացքում բազմաթիվ անգամ նշելով, որ դրանց մասին գիտե ականջալուր³: Այդ մասին նա գրում է նաև նշանավոր իր գրքի հիշատակարանում. «Եւ աւուրս յոլովս ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարհս շըրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով և ամենեցունց զասացեալսն դրելով, և վասն զըս-

¹ «Ժամանակագրութիւն Գրիգորի վրդ. Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ», հրատ. Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1915:

² «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1896:

³ Նույն տեղում, էջ 52, 85, 88—91 և այլն:

տուգութիւն բանին դասնելոյ, եղև զի զմի պատմութիւն, տասն անգամ և այլ անելի կրկնելով զրեցի...⁴

Սակայն ժէ դարի առաջին քառորդում տեղի ունեցած իրադարձությունները, ավելի կամ պակաս չափով, արտացոլվել են ձևապարզ ընդօրինակող գրիչների կամ ուրիշների զրած հիշատակարաններում, արտիք լրացնելով մեկը մյուսին, որպես ժամանակակցի կամ ակնուստեսի դրառումներ, պատմական անգնահատելի արժեք են ներկայացնում: Կարելի է համարձակ ասել որ հայ ժողովրդի ժԴ—ԺԸ դարերի լիարժեք պատմությունը չի կարելի դրել առանց ժամանակին ընթացակից հիշատակարանների բաղմարողանդակ և հարուստ նյութերի օգտագործման: Այստեղ մեր նպատակը չէ շարագրել հայ ժողովրդի պատմության ժէ դարի առաջին քառորդի քաղաքական պատմությունը, օգտագործելով ներկա հատորում ընդգրկված հիշատակարանների ընձեռած հարուստ և ուշադրավ նյութը: Ժամանակին եղած աղբյուրների հիման վրա մասամբ այգ կատարել է լեոն⁵:

Վերջին տարիներս նորահայտ նյութերի և մասամբ հիշատակարանների հիման վրա դրվել և հրատարակվել են նոր ուսումնասիրություններ: Ժամանակագրական կարգով դրանք են Հ. Անասյանի «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» ուսումնասիրությունը (Երևան, 1962 թ.), որի ներածությունը՝ նվիրված է ժէ դարի թուրքական տիրապետությանը Հայաստանում՝ հարկույին ծանր քաղաքականությանը, ջալալիների շարժման համառոտ պատմությանը, այդ շարժման բնութագրմանը և հարակից այլ հարցերի: Մյուսը, ուր ուսումնասիրության հատուկ նյութ է դարձել ջալալիների շարժումը, Մ. Զուլայանի «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ» աշխատությունն է: Այստեղ ամբողջական ձևով վերապատկերված են Արևմտյան Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական դրությունը և հայ ժողովրդի իրավական վիճակը օսմանյան կայսրության մեջ ջալալիների շարժման նախօրերին, այնուհետև ջալալիների բուն շարժման սկիզբը, ընթացքը և վախճանը:

Թեպետ անհրաժեշտ չենք համարում ներկա հատորի հիշատակարաններից առանձին իրադարձությունների մասին բերել որոշ մանրամասնություններ, որոնք շեղվում են Առ. Գավրիլեցու Պատմության տվյալներից, օրինակ, Գառնիի և շրջակայքի բնակչության բռնի սպանությանը ցույց տրված դիմադրությունը⁶, սակայն մի շարք եղելությունների և առաջին հերթին ջալալիների շարժման բնույթի մասին հարկ կա անդրադառնալ, օգտագործելով զլխավորապես հենց սույն հատորի հիշատակարանների ընձեռած նյութերը: Հույզանական սկզբնաղբյուրները և մտանավորապես հիշատակարաններն առանց օգտագործելու կամ թեթևալի օգտագործելով իրադարձություններից հետո հան-

⁴ Նույն տեղում, էջ 670:

⁵ Հիշատակարանների, որպես ուշադրավ, փաստաթղթի և բաղմարան հարցեր ընդգրկող պատմական աղբյուրի, դրական և թերի կողմերի մասին խոսել է Լ. Խաչիկյանը, տե՛ս նրա «ԺԴ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանները» (Երևան, 1950) աշխատության Առաջաբանը, էջ VII—VIII:

⁶ Տե՛ս Լեո, Հայոց Պատմությունը, Կ. II, Երևան, 1946:

⁷ Այն առանձին տպվել է ավելի վաղ, տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. դիտ.), 1951, № 5, էջ 51—69. «Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում» վերնագրով:

⁸ Հմմտ. Առ. Գավրիլեցի, Պատմութիւն, էջ 47—52 և № 354 հիշատակարանը և այլն:

դեպ եկած Առ. Դավրիժեցու Պատմության որոշ տվյալներ, սովետական պատմա-
 մադրութիւն մեջ ջալալիների շարժումը անվերապահորեն բնութագրել են իբ-
 րև գյուղացիական շարժում՝ ուղղված սուլթանական Թուրքիայի ավատատիր-
 րութեան դեմ: Ա. Ս. Տվրիտինովան հենց այդպիս էլ գրում է. «Կարա-Օաղի-
 ջիի-Դևլի Հասանի ապստամբութունը ըստ էութեան հանդիսանում է գյուղա-
 ցիական ապստամբութուն, ինչպես նրա մասնակիցների հիմնական կազմի
 ղանգվածով, այնպես էլ նրանց առաջ կանգնած խնդիրների բնույթով...»⁹: Այս
 հարցի մասին հիմնավոր ու մանրամասն խոսել է Մ. Զուլայանն իր ուսում-
 նասիրութեան մեջ¹⁰, թեև այստեղ, մեր կարծիքով, առկա են առանձին թերու-
 թյուններ և ոչ հստակ ձևակերպումներ: Մ. Զուլայանն իր մենագրութեան մեջ
 լավ է տվել ջալալիների շարժման դասակարգային հենքը և շարժման ուժի
 բնութագիրը. «Հնդհանրապես գյուղից փախչողներին անվանում էին «չիֆթ-
 բողաններ» (çiftbozanlar), այսինքն՝ չիֆթը (հողակտոր—Վ. Հ.) քայքայողներ
 ...Չիֆթբողանների մի զգալի մասը դառնում էին ուղղակի ճամփա կտրող ավա-
 ղակներ, որոնք գործում էին ամեն տեսակի հանցագործութուններ: Այս մարդ-
 կանց անվանում էին նաև լվկենդներ (դատարկապորտ թափառաշրջիկներ):
 Սրանք դարձել էին մի սոսկալի պատուհաս ժողովրդի գլխին: Հենց այս դա-
 տարկապորտ թափառաշրջիկներն էին, որոնք դարձան ջալալի ապստամբների
 հիմնական ուժը: Եվ պատահական չէ, որ հայ մատենագրութեան էջերում ջա-
 լալիների անվանվել են «ղորսույք լկոիք», «հլուղակք», «գողք աւագակք» և
 այլն»¹¹ (ընդգծումը հեղինակինն է—Վ. Հ.): Կամ «Շոշափելով շարժումների
 մասնակիցների հիմնական ղանգվածների սոցիալական կազմի ու նրանց
 առաջ դրված խնդիրների հարցը, ուսումնասիրութեան ընթացքում եկանք այն
 եղրակացութեան, որ այդ շարժումները կարելի է բաժանել երեք էտապների:
 Այդ երեք էտապներում շարժումները գրեթե լիակազմում են յուրահատուկ ձևով, առ-
 տահայտելով հասարակութեան այս կամ այն խավի, ու երբեմն մի ամբողջ
 ժողովրդի հետամտած նպատակները: ...Նրեք էտապներում էլ ջալալիների
 շարժումները սուր սոցիալական հակամարտութունների արդյունք են և շեշտ-
 ված ձևով իրենց վրա կրում են դասակարգային պայքարի կեիքը: Փաստը
 մնում է փաստ, որ շարժումների մասնակիցների հիմնական զանգվածն եղել է
 ծանր հարկերից, տուրքերից ու ֆեոդալների կատարած ամեն տեսակի կամա-
 յականութուններից ծայր աստիճան քայքայված գյուղացիությունը: Բուրժու-
 վին այլ հարց է, թե այդ գյուղացիութեան մի զգալի մասը կսուղմում էր դեռևս
 16-րդ դարի 60—70-ական թվականներին ապադասակարգայնացված տար-
 րերը (չիֆթբողաններ, լվկենդներ, սուխտաններ), որոնք վերածվել էին պրո-
 ֆեսիտնալ ավաղակախմբերի, դառնալով շարիք ու դատուհաս բնույթի
 գլխին»¹² (ընդգծումը մերն է—Վ. Հ.): Իսկ Ա. Տվրիտինովան ջալալիների
 շարժման սոցիալական հենքի մասին խոսելիս դտնում է, որ այն իրստ տա-
 րատեսակ բնույթ ունեւր Շարժումնը մասնակցում էին գյուղացիներ, վաչ-
 կատուններ, մանր ֆեոդալներ, ճակատից փախած դասայիքներ և նույնիսկ

⁹ А. С. Тавритинова, Восстание Кара-Языджи-Делы Хасана в Турции, М-Л, 1946, стр. 78 հմտ. стр. 59, 71, տե՛ս նաև А. Ф. Миллер, Краткая история Турции, М, 1948, стр. 27, «Всемирная история», т. IV, М. 1958, стр. 554.

¹⁰ Հատկապես կարգա աշխատութեան 217—220 էջերը:

¹¹ «Ջալալիների շարժումը...», Սրեան, 1966, էջ 130—131, հմտ. նաև էջ 139:

¹² Նույն տեղում, էջ 217—218:

խոշոր ֆեոդալներ... Սակայն անվիճելիորեն, հիմնական ղանգվածը կազմում էր գյուղացիությունը...»¹³։ Շարժման նման կազմի դեպքում եթե շարժման ուժը հիմնականում գյուղացիությունը լինեի ապագասակարգայնացած տարրերի հետ, որի ղեկավարությունը գտնվում էր օսմանյան րանակից փախած գինվորության և ֆեոդալների ձեռքում, ապա այն կարող էր գյուղացիությանը հուզող պահանջներով հանդես գալ և շարժումը բնութագրել որպես գյուղացիական։ Այս հարցին մեր հեղինակները չեն պատասխանում։ Միանգամայն ճիշտ է, որ ջալալիների շարժումն արդյունք էր օսմանյան բռնակալության լծի ահավոր ճնշման և ասուր սոցիալական հակամարտությունների»¹⁴։ Սակայն դասակարգային հասարակության մեջ միշտ չէ, որ սոցիալական շարժման բնույթը որոշվում է տվյալ շարժման ուժերի դասակարգային պատկանելությամբ։ Սոցիալական և քաղաքական յուրաքանչյուր շարժման բնույթը որոշելիս պետք է ելնել ոչ թե նրա առաջացման նախադրյալներից, ոչ թե դասակարգային բազայից՝ շարժման ուժերից, այլ նրանից, թե տվյալ շարժումն ինչ խնդիրներ է առաջադրում և, որ նույնքան կարևոր է, ինչ ձևով ու միջոցներով է իրականացվում առաջադրած խնդիրները՝ սոցիալական և տնտեսական ծանր վիճակից դուրս գալու համար։ Այժմ տեսնենք, թե ինչ են հաղորդում հիշատակարանները, որոնց նյութը հնարավորություն է ընձեռում ավելի ճիշտ հասկանալու և բնութագրելու այդ շարժման էությունը։

Հիշատակարանների հեղինակներից ովքեր անդրադարձել են ջալալիներին, առանց բացառության դրում են նրանց միայն վալրագությունների՝ քաղաքների, գյուղերի և բնակավայրերի ավերման, հրկիզման, կողոպուտի, ժողովրդի բնաջնջման և գերեվարման մասին։ Ահա թե ինչ են գրում ջալալիների սարսափն ապրած մարդիկ։ Ստեփանոս Թոխաթեցին Կաբա Յաղիջիի մասին գրում է. «Նախ էառ ղմուհա քաղաք և տիրեց իւր բոլոր գեղի և մանր քաղաքացն, և զամենեցուն զապրանքն և ղմալն առեալ, զոմանս սպանեալ և զտասն տարուն ի վեր եղած ղտղայքն գերի առեալ։ Եւ տարի մի այլ եկեալ Մալաթիա բնակեալ, և զնոսա այլ թալանեալ և մերկացուցեալ ի հոգևոր և ի մարմնաւոր բարութեանց։ Եւ անտի եկեալ բազում ղօրաւք ի Սեբաստիա քաղաք... և շատք ի դեղէ և ի քաղաքէ ըսպանեաց և ի սուր մաշեաց, և ղտունս և զքնակութիւնս, ղպաղաստան և զշարշուններն նախ թալանեցին և ասլայ դամենեսեան հրով այրեցին»¹⁵։ Մեկ ուրիշը գրում է. «...Բաղում ղօրօք (իմա՛ Կարա Յաղիջիի—Վ. Հ.) եկն ի վերայ մեծ քաղաքիս Սեաստոյ, և բալում շարիս արարեալ և ոճիրս գործեաց, աւելի քան զի՛ն (20000) այր շարդեաց և սրախողխող արար, և ԸՃ (800) անմեղ տղայս ի Հայոց և ի Հոռոմոց դերի վարեաց, և յետոյ զքաղաքն ամենայն հրով այրեաց։ Իսկ ղողբս նոցա և զարտասուս ղլալիսն և զհառաչանս, զկսկիծս և զզառնութիւնս,

¹³ Ա. Ս. Տվերիտինովա, նշվ. աշխ., էջ 59։

¹⁴ «Ջալալիների շարժումը...», էջ 219, տե՛ս նաեւ էջ 134։ Շատ տիպական է բնութագրված թուրքական տիրապետության էությունը մի ձեռագրում. «Ամենայն ապրանք թուրքացն բնութեամբ և անիրաւութեամբ, ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից. իսկ թագաւորն գիրանայ ընչիւք փաշայիցն, զոր օրինակ, առուքն լնուն և առատացուցանեն զգետս, իսկ գետքն հուսկ յետոյ իշանեն ի ծովն և կորուսանեն զգոլն ևս իւրեանց և զհամբաւ շրոյն ևս» (№ 1496, էջ 313բ), կամ «...Արքայքն թողուն զպաշտօնեայս հարկանել և հիւթաւորել որպէս զսպունգ և սպա քամեն զնա բոնցի և թողուն զնա ցամաք և դատարկ» (նույն տեղում, էջ 293ա)։

¹⁵ № 154 հիշատակարան։

դվիշտս և դտառապանս ոչ կարեմ ընգ դրով արկանել և կամ լեզուաւ պատմել»¹⁶, նրորորդ հաստատում է վերևում ասվածը. «Եւ մատնեցաւ քաղաքն (Սեբաստիա—Վ. Հ.) և ևրկիրն մարդով և անասնով, ընչուքն և ապրանաւքն ի ձևն արեանարբու գաղանին (Կարա Յաղիչի—Վ. Հ.), որ անխնայ կոստորեաց րադում քրիստոնեայս և դմանկունս նոցա դերի տարեալ...: Եւ բաղում աւուրս նստեալ յեղր քաղաքին այրեաց և աւերեաց ղդեղեցկայշէն քաղաքն և դաւանքրն, մինչ ղի ամայի մնաց Սեփաստիայ թեմովն և վիճակովն բաղում ժամանակս...»¹⁷: Նույնն է վկայում Սրապիոն Բաբերդացին Ջանփուլատ օղլի Ալի փաշայի և Թավուլի մասին, որոնք հրով ու սրով ավերեցին Հալեպը շրջակա քաղաքներով և ղյուղերով, Կիլիկիան, Մարաշը, Սեբաստիան, Եկեղեցաց գավառը՝ «մինչև ի մեծ ծովեղերն Եփեսոս ի Ջմոհն: Եւ անտի դարձեալ եկն ի Կոնիոն, ի Գաղատիայ, ի Կասսամոնի, և անտի ի մեծն Պոնտոս»¹⁸:

Աղարիա Սասնեցին, Գրիգոր Դարանաղեցին և Առաքել Դավրիժեցին նշում են ջալալի տարբեր խմբերի ասպատակութիւնները ժամանակը և նրանց դործունեութեան տարածքի շառավիղը¹⁹: Եվ ինչպես Գրիգոր Դարանաղեցին է դրում. «Եւ ի սորա (Ահմատ Ա —Վ. Հ.) ժամանակին ջալալիքն ղաշխարհն Անատոլեաց ծածկեալ էին որպէս ղձիւն»²⁰: Այս ավերի ու ծխի, արյան ու վշտի մեջ տուժող ժողովուրդն էր. «Գիտելի լինի, որ փախիր փութարէն խիստ հալածական»²¹ է: Պետք է նշել նաև, որ այս դժոխքի մեջ ծանր էր նաև թուրք բնակչութեան վիճակը՝ ենթակա կողոպուտի, գերեվարութեան և սպանման. «Ոչ թէ քրիստոնէից միայն առնէին, մանաւանդ Տաճկաց առաւել անողորմաբար գործէին ղամենայն շարիս»²² գրում է Գրիգոր Դարանաղեցին:

Ժողովուրդի սարսափը ջալալիներից լավ է արձանագրել ժամանակակիցներից մեկը. «... Ի ժամանակիս յայսմիկ ոչ ունիմք հանգիստ և դադարումն՝ ո՛չ յամարայնին և ո՛չ ի ձմերայնի, ո՛չ յեղանակս գարնանային և ո՛չ յաշնանային, ո՛չ տիւ և ո՛չ գիշեր, ո՛չ շաբաթ և ո՛չ ամիս, այլ միշտ և հանապաղ յերեւալ և սասանեալ կամք: Յորժամ ննջեմք, ասեմք «Ե՞րբ լիցի առաւօտ». և յորժամ առաւօտ լինի, ասեմք. «Ե՞րբ իցէ երեկոյ»: Եւ այսպէս յամենայն կողմանէ վիշտ է և խռովութիւն, ...: Քանզի յամենայն կողմանց է նեղութիւն՝ յաջմէ և ի ձախմէ, ի դիմաց և ի թիկանց, ի վերուստ և ի ներքուստ: Եւ այսպէս սլաշարեալ եմք և ոչ ուրեք գտանեմք ղելն»²³:

¹⁶ № 138 հիշատակարան:

¹⁷ № 163 հիշատակարան:

¹⁸ № 358 հիշատակարան:

¹⁹ № 549 հիշատակարան, «ժամանակագրութիւն Գրիգորի Կամախեցու...», էջ 30, 32, 33, 37, 42 և այլն, Առ. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 86—87:

²⁰ «ժամանակագրութիւն», էջ 18:

²¹ № 166 հիշատակարան:

²² «ժամանակագրութիւն», էջ 143: Այս հաստատում են նաև հիշատակարանները, տե՛ս № 154 և այլն:

²³ № 182 հիշատակարան, էվլիա Չելերին «Ծանապարհորդութիւնների դրում» հաղորդում է, որ ինքը 1640 թ. եղել է Ամասիայում, բերգի ստորին մասը հարուստ է այրերով, որոնց մեջ չալալի Կարա Յաղիչիի և Կարա Սայիգի ժամանակ քաղաքի ազնւանի և երեկի մարդիկ թարցրել էին իրենց գանձերը և ունեցվածքը և իրենց ընտանիքներով պատսպարվել այնտեղ: Ա. Ս. Տվերիտինովան մեջ բերելով այս տեղեկութիւնը, եղրակացնում է «Խոշոր ֆեոդալները չեն եղել ապստամբութեան կողմնակիցներ (թեև իր գրքի 59-րդ էջում հեղինակը խոսելով Կարա Յաղիչիի ապստամբութեան սոցիալական քաղաքի մասին, գրում է, որ ապստամբութեան մասնակցել են նաև «եռուխիսկ խոշոր ֆեոդալները»—Վ. Հ.) և Կարա Յաղիչիի գործունեութիւնը առաջին հերթին սպառնացել է ազնւական և երեկի մարդկանց» (էջ 67—68): Վերևում բերված փաստերը

Ընդհանրապես ժողովրդի և մասնավորապես սոցիալիստների նկատմամբ բռնաճնշան կայսրության դաժան քաղաքականության պակասը իրենց գործունեությունում լրացնելով և երկիրն ու ժողովրդին հասցնելով անկյանների վիճակի, չալալիներն իհնչ Լին հետապնդում: Նրանց պահանջներում կա՞ր դյուզադիստիկան սոցիալ-անտեսական և իրավական վիճակը թեթևացնելու նշույ: Ա՞նտ Կարա Յաղիջիի, նրա մարդկանց և ընդհանրապես ջալալիների պահանջը ժողովրդից: «Մեզ ըողակ և մանչ ցըցուցէք»²⁴, Անձա՞ր Սանփանոս Թոխաթեցուց պահանջում են «Մեզ մանչ և ըողակ ցըցուցէք»²⁵, Եվ նա ավելացնում է. «Զ (6) է (7) տարու ի վեր աղակներն զամէնն տոհն և հագուցին. զի մինչև ԻՌ (20000) սողայ առեր էին ի հայէ և ի տաճկէ. և բազում սարկաւազումք և տուլաթիւրաց սողալք տարուն և դժնօզսն աղէխարչ արարին»²⁶: Այդպիսին էլ նաև մյուս չալալիների հետապնդած նպատակը, օրինակ, Առաքել Դավրիժեցին ևս հստակ դում է, որ մարդկանց խոշտանդելով և տանջամահ անելով նրանցից պահանջում էին «ցուցանել պահարան», «Յուցանել ...համբարս ցորենոյ և դարսոյ, դարանս և պահարանս պանծուց և ստացուածոց»²⁷: Մեկ ուրիշ դրիչ գրում է. չալալիները Այրարատյան երկրում «բազում ոճիրս շարեաց գործեցին ի սակաւ մնացեալս, զիշերադնաց եղեալ զննէին և որոնէին, և թէ ուր ուրք գտանի մարդ, ի վերայ հասեալ կոտորէին և զտղայո դերէին, զտունս և զկեկեղեցիս աւար հարկանէին...»²⁸ կամ «ոչ զերծաւ ի նոցանէ դարունք վտնորէից, բանդի ի ձև ածեալ զբրիստոնեայս շարշարէին և նորայ ցուցանէին, որպէս զգարուն Աղբոց վանից յայտնեցին»²⁹: Եվ էլի. «Վայ այն աշխարհին, որ նոցա ոտն կտխեաց, զի զտուռակալ բրիստոնեայս յորս այս արկանէ[ի?]ն և զերանս ծամէին, թէ «Մեզ ինչը և ալրանք ցուցէք». և այնպէս պան մտհոււամբ սպանանէին»³⁰:

Առաքել Դավրիժեցին թվելով ջալալի ղեկավարների անունները, շարունակում է. «Սորա ամենեքեան ջալալիք էին, որք ոչ հնազանդէին թաղաւորին, և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւորք և աշխարհակործանք. և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին»³¹: Այսպիսով, ջալալիները ժողովրդից խլում էին ունեցվածքը և արու գավառներին, որոնց մի մասին մեծ փրկանքով վերագարծնում ծնողներին, իսկ մյուս մասին դարձնում կողոպտիչներ:

Առաքել Դավրիժեցին օգտագործելով ժամանակակիցներից մեկի պատմածը, տալիս է Կարա Յաղիջիի զորքի մեկ օրվա աղբուստի ծախսերի չափը. «Եւ ասէին թէ յամենայն աւուր զայս չափ ծախս ունէր, այս է ի մի օրն, զերեսուն մի վարի տայր երկվարացն, և այս Միջագիտաց մոթն է, որ ամէն մոթ՝ երկու հարիւր քսան և շորս լիտրն զայ Հոռոմանց լարովն, և շորս հարիւր լիտր

չեն հաստատում այս պնդումը: Զալալիները հավասարապես կողոպտել են ժողովրդի բոլոր խավերին: Ի դեպ հիշատակարաններից մեկում ասվում է. «Ընդ ամենայն տեղիս ելուողս կին եղեալ իշխանէն» (ընդգծումը մերն է.—Վ. Ն.), № 354 հիշատակարան:

²⁴ № 154 հիշատակարան:

²⁵ նույն տեղում:

²⁶ նույն տեղում:

²⁷ «Պատմութիւն», էջ 80, 81, 83, 84 և այլուր:

²⁸, ²⁹, ³⁰ Տե՛ս № 354 հիշատակարանը: Ավելի ուշ Երեմիա Քյոմուրջյանը նույնն է հաստատում. «Ջղանձս և դմանկունս և պահանջլրս» (№ 1675, էջ 87ա):

³¹ «Պատմութիւն», էջ 87:

հաց, հարիւր և տասն ոչխար, ԼԵ լիտր բրինձ, տասն լիտր խոզ, և Շ դուռուշ ոռ-
 ճիկ, դի օրն Ռ դուռուշ ծախք ունի ասէին»³²։ Թե ինչքան ստույգ են այս տը-
 յալները, չենք կարող ասել, սակայն հաստատ է այն, որ մի քանի հալաբի
 հասնող նրա զորքը անհրաժեշտ չափով ապրուստ պետք է ունենար, իսկ քա-
 նիփսն էին Ցաղիջիի նման ջալալի ղեկավարները։ Մեր աղբյուրներում գրանք
 մեկ տասնյակից անցնում էին։ Հարց է առաջանում, ԼԵՅ ջալալիները չէին աշ-
 խասում, պետական միջոցներից ոչինչ չէին ստանում, ապա նրանց ապրուս-
 տը որտեղից էր հայթայթվում։ Պարզ է, որ ժողովրդից, ոչ թէ հարկատու-
 թյամբ, այլ բռնագրավումով, կողոպուտով, բնակչության ոչնչացմամբ տեր
 դառնալ նրանց ունեցվածքին։ Այսպիսով, ջալալիների «աշխատանքը» կողո-
 պուտն էր, ավաղակային բռնագրավումը սպանութունների միջոցով։ Դա
 թուրք նվաճողների այն հին եղանակն էր, որ ժառանգել և իրագործում էին ջա-
 լալիները։ Իրավացի էր էնգելսը, Լրբ իր հողվածներից մեկում գրում էր. «Երբ
 նրանք (թուրքերը—Վ. Ն.) տակավին գտնվում էին իրենց նախնական՝ վաշ-
 կատուն վիճակում, նրանց առևտրի եղանակը քարավաններ կողոպուտելն էր.
 այժմ, Լրբ նրանք որոշ չափով քաղաքակիրթ են դարձել, այդ եղանակը բոլոր
 հնարավոր կամայական ու բռնի տուրքերի գանձումն է»³³։ Չմոռանանք հիշեց-
 նել, որ էնգելսն այս վերջին եղանակը նշում է անցյալ դարի համար (այժմ,
 Լրբ)՝ իսկ ավելի վաղ՝ Ժէ դարում եկամտի գլխավոր աղբյուրը կողոպուտն էր,
 կամայականությունը և բռնությունը։ Իսկ բռնությունը ոչինչ չի սուղծում, այն
 ունեցվածքը խլում է, միայն այսքանը։ Եվ ջալալիները արյունով ու բռնու-
 թյամբ ժողովրդից խլում էին ամեն ինչ։ Որպես կանոն բնակչությունը մեծ
 տաղանայ էր ապրում ջալալիների անունը լսելիս և փախչում էր ուր կարող էր³⁴։
 Նրանք կտրված էին ժողովրդից և չէին վայելում վերջինիս համակրությունը,
 այդ սլաճաճումով էլ շատ շուտով՝ մի քանի տարում վերացան։ 1608 թ. հիշա-
 տակարաններից մեկում այդ մասին կարդում ենք. «Արդ՝ դրեցու... ի թագաու-
 րութեանն սուլտան Ահմատին և ի սարգարութեանն արհնեալ Մուրատ փա-
 շտյին, որ ահա Լօթն տարի է, որ այս միջոցս աշխարհս ի տարտարոսի կար-
 եկեալ բալում դարաւք և կոտորեաց ի յանաստուած աղգէ, որ ճալալ ասեն,
 աւելի բան դիՌ (20000), և արար սակաւ ինչ խաղաղութիւն, զոր տէր Աստուած
 զիւնքն րնդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն»³⁵ (ընդգծումը մերն է—Վ. Ն.)։
 Ուրեմն մարդիկ ինչքան էին խոշտանգվել, զրկվել և կորցրել, որ վեղիրին
 արեւշատություն էին ցանկանում, թեև այդ վեղիրը՝ Մուրատ փաշան ժողովրդի
 սլաշտողանը կամ բարիքսրը չէր³⁶։

³² Նույն տեղում, էջ 632—633։

³³ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, М. 1957, стр. 25.

³⁴ Այդ մասին նշում է Մ. Զուլայանը, տե՛ս «Ջալալիների շարժումը...» էջ 218։

³⁵ № 388 հիշատակարան։

³⁶ Ջալալիների շարժմանը հայերի մասնակցության մասին հիշատակարանները թեև ոչ մի
 փաստ չեն հաղորդում, սակայն Առ. Դավրիժեցու միակ և անորոշ վկայությունից («...գոյին և
 այլք ջալալիք՝ ոմանք յուրվք և ոմանք սակաւ... Այլ և ի Բրիտանեից ազգէ աւր՝ ոմաւել, որք
 ոչ ունէին ղերկիղն Աստուծոյ յինքեանս, իրրե տեսանէին թէ այլաղղիքն որպէս ւսունն, ինքեանք
 ես սկսան այսպէս առնել...» էջ 85) կորակացրել են, որ արեւելահայերը ես մասնակցել են տյգ
 շարժմանը (Մ. Զուլայան, Ջալալիների շարժումը..., էջ 184)։ Թեև այս եզրակացությունը հա-
 վաստի չէ, այնուամենայնիվ հարկ է դիտել, որ Երեմիա Քյոմուրճյանը պահել է ուղղակի վկայու-
 թյուն ընդհանրապես հայերի մասին։ Նա իր «Պատմութիւն համառօտ ԴՃ տարույ օսմանցոց թա-
 դաւորացն» չափածոյի մեջ գրում է.

«Օճախից անարբ առ այնս (ջալալիներին—Վ. Ն.) դիմեն,

Մ. Զուլալյանն իր ուսումնասիրության մեջ մի քանի անգամ նշում է Ջանփուրատ օղլի Ալի փաշայի գլխավորած ջալալիների շարժման բնույթի մասին³⁷, իսկ ամփոփման մեջ հետևելով Ա. Տվերիտինովային զրույց է. «1608—1610 թվականներին ջալալիների ապսամբությունների համար ընդորոշն այն է, որ այդ շարժումները ղեկավարում են բուրք ֆեոդալների կողմից նվաճված մի շարք ժողովուրդների (սիրիացիներ, լիբանանցիներ, ֆրդեր և այլն) առաջնորդների կողմից: Հատկապես Ջանփուրատի գլխավորած ապսամբության հիմնական նպատակն է եղել՝ թոթափել թուրք ֆեոդալների ատելի լուծը...: Այսպեսնով էլ այդ շարժումը, բնականաբար, ունի առաջադիմական բնույթ»³⁸ (ընդգծումը մերն է —Վ. Հ.): Նախ անորոշ է ասված սիրիացիների, լիբանանցիների, դրանք արաբներն են. երկրորդ. սխալ է աղատագրական շարժման բնույթը բնորոշել նրա առաջնորդների աղդային պատկանելությամբ³⁹: Երրորդ. դարձյալ պետք չէ մոռանալ, որ որևէ շարժում բնութագրելիս բավական չէ նկատի ունենալ շարժման նպատակը, այլև վերջինիս հասնելուն նպաստող առաջադրած խնդիրները և դրանց լուծման միջոցները: Մինչդեռ Ջանփուրատ օղլի Ալի փաշայի միջոցառումները ջալալիական նույն ավաղակությունն էր՝ կողոպուտար, ավերումը, ժողովրդի անխնա կոտորումը, իսկ բուն նպատակը՝ իր և իր նմանների ավատական սեփականատիրական իրավունքների և արտոնությունների վերականգնումն էր: Ջանփուրատ օղլու ղեկավարած շարժումը անցավ սոցիալ-տնտեսական և աղատագրական հարցերի լուծման կողքով: Վերջին հաշվով, եթե որևէ շարժում չի լուծում սոցիալ-տնտեսական հարցը, ապա նա չի կարող լուծել նաև աղդային-աղատագրության հարցը, որովհետև «Իրականում հենց այս վերջինն է (սոցիալ-տնտեսականը—Վ. Հ.) գլխավորը»⁴⁰:

Այսպիսով, ջալալիների շարժումը թեև արդյունք էր Թուրքիայում տիրող ինքնակալական բռնապետության, վայրագ ավատատիրության դաժան շահագործման և պաշտոնյաների կամայականությունների, այնուամենայնիվ այն չկարողացավ և չէր էլ կարող սոցիալական որևէ հարց լուծել հօգուտ կեղեքվող դյուղացիության, անկախ այն բանից, որ բնակչության մեծ մասը՝ դյուղացիությունը Թուրքիայում թույլ էր, տնտեսապես, քաղաքականապես, իրավապես ճգնված, օտար ժողովուրդները ենթակա նաև կրոնական, աղդային և այլ կարգի հալածանքների: Ջալալիները ժամանակավորապես բուլացրին սուլթան-

Ձի մի՛ լիցին եոցսն ուպանեալ,
 Ջտունս և ղկալուածս ի յետս ձզնն,
 Վկինս և ղղաւակս ի րաց լքեալ:
 Շատք ի Հայոց գայս աբաբին,
 Սւ ոչ միայն ղտունսըն թողեալ,
 Սւ ղսր. հաւատն ուրանային,

Ջանմեղ ղարինս հեղուլ փութալ» (№ 1675, էջ 85ա, ընդգծումը մերն է—Վ. Հ.):

Եթե ճիշտ է ուշ ժամանակի այս վկայությունը, որի մեջ սեփական անձի փրկությունն ստիպում է «Օճախից տեարք» մարդկանց և «Շատք ի Հայոց» լքել ընտանիքը և ունեցվածքը միայն ողջ մնալու համար: Մյուս կողմից Թյոմուրշյանի վկայությունը ուշադրավ է նրանով, որ մարդիկ ջալալիների վայրագություններից սարսափած ու ստիպված և ոչ թե նրանց գործունեությունից հրապուրված, կամավոր կերպով ինչ-որ նկատառումներով, մասնակցել են ջալալիների շարժմանը: Եվ սրանց մասնակցությունը բոլորովին չի փոխում շարժման բնույթը:

³⁷ «Ջալալիների շարժումը...» էջ 140, 173, 178:

³⁸ «Ջալալիների շարժումը...», էջ 219—220, հմմտ. նույն տեղում, էջ 139—140, Ա. Ս. Տվերիտինովայի գրած բաժինը «Всемирная история»-ի IV հատորում, էջ 554—555:

³⁹ Նույն տեղում, էջ 135:

⁴⁰ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, Երևան, 1950, էջ 503:

ևական Թուրքիայի կենտրոնաձիգ բռնապետությունը և ժամանակավորապես խառնեցին վերջինիս հաշիվները արտաքին ֆալաֆակաճարման մեջ: միայն այդպիսով: Իսկ այդ տեղի ունեցավ ժողովրդի (Ֆև հայ, թե թուրք և թե ալլ) անադորուն տանջանքների, զրկանքների հաշիվին, ոչ միայն կայրի, ալլև կյանքի զնով: Ուրեմն ժողովրդի համար ջալալիների շարժումը կամ դրա հետևանքով օսմանյան կայսրության ժամանակավոր թուլացումը ի՞նչ արժեք ունեն, երբ ամեն ինչ զրեթե հոշոտված էր և ամայացված:

Ժողովուրդների ընդհանուր բնաջնջման ջալալիների այս քաղաքականությունը, ո՞վ դիտե, գուցե օրինակ հանդիսացավ համիդյան և երիտթուրք ստահակների համար, որոնք ավելի ուշ, նման բնաջնջման եղանակը բարձրացրին պետական քաղաքականության մակարդակին և կիրառեցին հայերի նկատմամբ: Դրանով իսկ թուրքական տիրապետությունը Հայաստանում հաստատեց այն ճշմարտությունը, թե «Երկիրը նվաճելուց հետո միշտ նվաճողների ամենամեծավոր խնդիրն էր դառնում մարդկանց էլ յուրացնելը»⁴¹:

Այսպիսով, ջալալիների շարժումը գյուղացիական շարժում չէր, թեև նրա շարժիչ ուժերի մեջ էին մտնում նաև քայքայված գյուղացիությունը և սրա ապագասակարգայնացած տարրերը⁴²: Ծվ պետք չէ մոռանալ կարևոր այն փաստը, որ ջալալի մի շարք ղեկավարներ հայցում էին սուլթանի ներողամտությունը և կայսրության տարբեր մասերում մի-մի գավառ ստանալով, հրաժարվում իրենց «նպատակ»-ներից: Իսկ թե զրանցից յուրաքանչյուրը նոր պաշտոնավայրում ինչ վախճան ունեցավ, տեղեկացնում է Գրիգոր Դարանաղեցիին⁴³: Մյուս կողմից պետք է տարբերություն դնել նպատակադրված կամ գիտակցված և տարբերային շարժումների միջև: Դասակարգային, ներկա դեպքում, գյուղացիական շարժում կարող է լինել զրանցից թե մեկը և թե մյուսը: Կարեվորը նաև այն է, թե ո՞ւմ է ձեռնտու շարժումը կամ ո՞վ է օգտագործում

⁴¹ Կ. Մաբս, Կապիտալ, հ. III, մաս II, գիրք III, Երևան, 1949, էջ 329, թթ. 46:

⁴² Առ. Դավրիժեցին հանվանե թվելով ջալալիների ղեկավարների անունները, դրում է. «Սոբին (իմա Զանփուլատ օղլի Ալի փաշա—Վ. Հ.) եղբայրն՝ զորոյ անունն ոչ զտաք, Քոսովի, այս այն Քոսովին է, որ բազում խաղ է սացեալ, զոր այժմ աշգնեբն եզանակեն» (էջ 87, ընդգծումը մերն է—Վ. Հ.): հմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 2, Երևան, 1956, էջ 517, Երեմիա Քյոմուրջյանի Օսմանցոյ պատմությունը, № 1675, էջ 88ր: Ուրեմն ըստ Դավրիժեցու Քյոսովին ջալալի էր. ապա ինչպես բացատրել այն փաստը, որ ժողովուրդը խորշելով ջալալիներից, Քյոնոօղլու նկատմամբ հարգանքով էր վերաբերվում և նրա անձնավորության շուրջը երզն ստեղծելով տարածում էր դրանք: Տարիներ առաջ անտեղյակ լինելով պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու կարծիքին, մի առիթով կասկածանքով էինք վերաբերվել Դավրիժեցու սույն վկայությանը (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 535, ծանոթ. 57: Ավելորդ չէ հետևյալ մանրամասնությունը. «Մանր ժամանակագրություններ»-ի 2-րդ հատորի մեքենագրած մեկ օրինակը պահվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում 200 համարի տակ: Այնտեղ դրել ենք. «Այս փաստերը մեզ ենթադրել են տալիս, որ Ա. Դավրիժեցին, հավանաբար, շփոթել է ազբեջանական ժողովրդական էպոսի հերոս Քյոնոօղլուն ջալալիներից որևէ մեկի հետ, որ Քյոնոօղլին ավելի հին է, քան ջալալիների շարժումը», էջ 826, ծանոթ. 57: Խմբագրական աշխատանքների ժամանակ այս մեջբերումը, դժբախտաբար, հանվեց): Ջալալիների ժամանակակիցների՝ Մունչիի, Աղաբիա Սասնեցու վկայություններում Դավրիժեցու այս տեղեկությունը հաստատող փաստեր չկան: Հետևապես ճիշտ է Ի. Պ. Պետրուշևսկին, երբ գրում է. «Հավանաբար ջալալիական շարժման ղեկավարներից մեկը ընդունած լինի Քյոնոօղլու անունը, որը ժողովրդական է եղել նախորդ դարերում ձևավորված լեգենդի շնորհիվ» (տե՛ս Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв. Л., 1949, стр. 328):

⁴³ «Ժամանակագրութիւն», էջ 25, 92, 101 և այլն: Հմտ. նաև Ա. Ս. Տվերտինովայի նշված աշխատությունը, էջ 76—77:

այն իր նպատակների համար: Պետք չէ մոռանալ, որ ջալալիների տարերային շարժումը օգտագործում էին տիրապետողներն իրենց արտաքին բաղադրականություն մեջ թշնամու դեմ կռվելիս: Սուլթանական թուրքիան ցալալիներին օգտագործում էր շահական Պարսկաստանի դեմ, իսկ վերջինս՝ սուլթանական թուրքիայի դեմ, որոնց անհնար է հակաֆեոդալական շահախնդրությունների կրողներ համարել:

Ամփոփենք: Վ. Ի. Լենինը նոր ժամանակների առթիվ գրած իր հոդվածներից մեկում ասում է. «Մարքսի մեթոդը ամենից առաջ այն է, որ հաշվի առնվի պատմական պրոցեսի օբյեկտիվ բուժանդակությունը տվյալ կոնկրետ մոմենտում, սուլյալ կոնկրետ իրադրության մեջ, որովհետքի ամենից առաջ ըմբռնվի, թե առ դասակարգի շարժումն է հանդիսանում հնարավոր պրոցեսի գլխավոր դասակարգի այդ կոնկրետ իրադրության մեջ»⁴⁴ (ընդգծումը Վ. Ի. Լենինինն է—Վ. Հ.): Ջալալիների շարժման մեջ կա՞ր «հնարավոր պրոցեսի գլխավոր դասակարգի այդ կոնկրետ իրադրության մեջ» ոչ, նրանց նպատակը ոչ թե սուլթանական միահեծան կայսրության և վերջինիս սոցիալական հիմքի տապալումն էր և ոչ էլ գյուղացիության շահերի պաշտպանությունը, այլ շարժման ղեկավարների և սրանց շրջապատող ավատատերերի հուլային ախրայությունների ու արտոնությունների սեփականատիրական իրավունքը վերականգնելու կամ ձեռք բերելու ձգտումը⁴⁵:

Հիշատակարաններում ուշագրավ և հարուստ նյութեր կան երկրի ներքին կյանքի վերաբերյալ: Ջալալիների ստեղծած դժոխային վիճակի անմիջական հետևանք եղավ սարսափելի սովը (1606—1609 թթ.), որովհետև գյուղացիությունը կյանքի անուպահովության պատճառով դաշտ գուրս չէր գալիս, մյուս կողմից ցալալիները գյուղացիների (և ոչ միայն գյուղացիների) մոտ չէին թողել ոչ անասուն և ոչ սերմացու⁴⁶: Հիշատակարաններում քաղցն ապրած հեղինակները ցնցող գույներով են նկարագրում սովը և անասելի թանկությունը տարբեր գավառներում: Ահա նման վկայություններից մի քանիսը:

1. «Ծղև սով հացի և աղի, ելաւ որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի, չէր անդանիլ ի մարդի յաի: Չարն բաղմացօ, սէրն վերացօ, մեղքը սփոնցօ...»⁴⁷:

2. «Ծւ է սղութիւն մեծ, զի խոնդքարի լիտրն ալևրն եղև ի Ժ (10) շահի, շամիլն՝ ի ԺԲ (12), եղն՝ ի ԽԸ (48) շահի, և բրինձն՝ Լ (30) շահի, ըռուպն՝ ի Ի (20) շահի, շափ ցորեն՝ ի ԺԸ (18) շահի և կորեկ՝ ի ԺԳ (13) շահի: Վա՛յ մեղ, որ ի Սեաստու երկիր շատք զտղայք կերան: Ծւ ի մեր երկիրս (Մոկք—Վ. Հ.) և ի ծովուս բուրրն Ժ (10) օր խոտով և բանջարով անցուցանէին, և բաղումք սովամահ եղեն»⁴⁸:

3. «Ջայն ժամ սովն կալաւ զարարածս. որ եղ[և] քիլայ ցորեան ի ութ ափասի, ապա գնող կէր և ծախող չկէր: ...Որ ի սովու կերան հայք զշուն և կատու, էշ և ձի և կաշիք նոցա: Աղքատքն ժողովէին զերեք և չորս տարու չոր ոսկերներն և սղկէին և ուտէին և կուտուց կուտուց մեռնէին: ...: Որ կերաւ մայրն զորդին, հայրն ծախեաց զորդին Բ (2) կորեկ հաց, որ մեռան ի սովու հազարք հազարաց և բիրք բիրոց»⁴⁹:

⁴⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, Երևան, 1950, էջ 169:

⁴⁵ Հմմտ. Մ. Ջուլայան, Ջալալիների շարժումը..., էջ 218:

⁴⁶ Ա. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 87:

⁴⁷ Մ 166 հիշատ.:

⁴⁸ Մ 224 հիշատ., հմմտ. Մ 254 հիշատ.:

⁴⁹ Մ 244 հիշատ.:

4. «Վասն որոյ խիստ սաստիկ սով եղև ի քաղաք և ի ղևղ. և Եղ': Ա (1') քիլայ ցորեն և դարին Ժ (10) կարմիր: Եւ բազումք ի մեծամեծացն և ի փոքունց յաղբասացն, և յոսմկաց զմիս գազանաց և անասնոց կերան՝ զկատուի և զչան, զձիոյ և զիշոյ: Տղայք մորթէին և զմեռեալի միսն ուտէին»⁵⁰,

5. «Եւ եղև սով սաստիկ ընդ ամենայն տեղիս, մինչ զի զմեռեալս ի գերեզմանաց հանեալ ուտէին. ծնօղբ զծնունդս իւրեանց ուտէին...: Զշուն և զկատու և զամենայն պիղծ կենդանի ուտէին յաւուրս պահոց: Մուրթիւն և կատաղութիւն որովայնին ետ մոռանալ զբանակունութիւն և ևղեն որպէս զգազան՝ ի դարան մտեալ զմիմեանս որսային, յորժամ մայրն ի տանէն Ելանէր, ընգանիքն զտղայն ղենէին, եկեալ մայրն, զեփեալ միսն առաջի ղնէին, և նա ուտէր յանդէտս և ապայ ելեալ զտղայն որոնէր և խնդրէր: Ի կարի տագնապիլ ասէին ընտանիք ոչ ապարէն՝ այն էր որ զմիս կերար: Զփտեալ ոսկր դտեալ ի փոզոցի շփէին ընդ ափ և ուտէին և ապայ մեռանէին: Սուգ առ երկին և ողբայ երկիր, ճիշ բարձէք լերինք և բլուրք հանդերձ գազանօք և անասնօք և ամենայն թրոշնաւք, զի ոչ է լեալ այսպիսի սով, զոր մեք տեսաք, քանզի լիտր ալիւր Գ(3) ղոսօ է: Ի յԱրդրում քաղաք զմարդոյ միս և զիւղ վաճառէին, մինչև իմացաւ իշխան քաղաքին խեղճեաց զարսն, որ զայս առնէին, բայց ոչ կտրաց խստաւնեկ»⁵¹, Վերջապես Աղարիս Սասնեցին ևս գրում է.

«Զբոլոր երկիրն գերեցեալ,
Զինչս և զապարանս յափշտակեալ,
Վասն այն սաստիկ մեծ սով եղեալ,
Եւ հաց ուրեք շեղև դտեալ
Զի լիսր մի հաց Ժ (10) ոսկի լիեալ,
Եւ վայն ոչ ոք եղև գտեալ,
Քան[դի] զարտերն ամէն այրեալ,
Եւ զհոսկ նոցա հեւ իւր տարեալ»⁵²,

Թվում է, թե բավական է:

Զալալիների բարբարոսության հաջորդ հետևանքը Եղավ հայ ժողովրդի զանգվածային արտագաղթը մոտակա կամ հեռավոր երկրներ: Գաղթը և սլանդրխտությունը էժան շնտեցին արտագաղթողներին: Այդ մասին ևս սույն ժողովածուում հարուստ տեղեկություններ կան: 1605 թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում Կարապետ երեցը, զրելով սովի և թանկության մասին, շարունակում է. «Եւ այն, որ մնաց փախեալն ի Զգիրէն, ի Բաղդատ և յԱրաբստան, ի յԱսորեստան, ի Թաւրիզ, ի Ղազմին և ի Խորասան, և ի Գուրջստան, և խազարէն մէկ շի դարձօ ի յետս, ամենեքեան մեռան ի դարիբութիւն: Որ ի Զգիրէն ի քաղաքն միայն իրեցներն խսապ արին ամենքն զիւրեանց թաղածն՝ ԽՈ (40000) մարդ էր մեռէր, թող զայն, որ ի բուքն խեղճեցան և կամ ի գետն անկան, եւ թող զայլ քաղքունէքն, որ ի Սալմաստայ մինչև ի Գուրջստան և մինչև յԸստամբուլ և հիւսիսակողմով մինչև յԱմիթ և յԱլապ եղև անմարդաբնակ»⁵³: Մեկ ուրիշը լրացնում է Կարապետ երեցին. «Եւ ապայ յետ այնորիկ ցրուցեալ ազգս Հայոց յերեսաց սովուն ի Պարսկաստան, ի յԱսորեստան, ի Գուրջստան մինչև հասին ի Ճորճէն, ի յԱփսազ, ի Կաֆայ: Արհա-

⁵⁰ № 345 հիշատ.

⁵¹ № 354 հիշատ., հմտ. № 366 հիշատ.

⁵² № 549 հիշատ.

⁵³ № 244 հիշատ.

մարհեաց հայր զորդի, մայր՝ դդուսար, եղբայր՝ զեղբայր, Թողին այր զկանայս, կանայք մոռացան զաղէտ ծննդոց իւրեանց, Ոչ թէ մասնաւոր մի երկիր կամ երկու, այլ ընդհանրական՝ սկսեալ ի դրանէն Հոնաց և Ալանաց և ի լեռնէն Կովկասու մինչև ի Պոնտոս և յԵփեսոս և ի Կապադովկիայ և մինչև ի Դամասկոս և ի Սիս և ի Միջագետս: Բոլոր Հայաստան ամենայն ցիր և ցան եղեն⁵⁴, Ոմանք բըքահեղձ, ոմանք գետատար, ոմանք սովամահ, ոմանք զաղանակեր...: Եւ տեսցեն զոսկերս արանցն յանցուցելոցն առ իս: Ասորեստան և Պարսկաստան և երկիրն այլազգեաց եղեն Հայոց գերեզման⁵⁵, Արտագաղթի այս նոր ալիքը սովարացրեց հայութեան զանգվածը նախկին գաղթավայրերում կամ էլ հիմք դրեց նոր գաղթավայրերի: Միմէնն Լեհացու հաղորդամբ, 1608 թ. Կ. Պոլսում 80 տուն հայ բնիկների դիմաց 40000 տուն գաղթականներ կալին. ՁԵ թէ հաշուես ի Պոլստանայ մինչև Ստամպոլ, պոլսոն Ուռումէլին մինչև մեծն Վանաաիկ, նա շկայ քաղաք, գեղ կամ շֆտլիկ, որ հայ շկենայ⁵⁶:

Պատերազմների և ասպատակութունների, հրի ու սրի, սովի և գաղթի պայմաններում բնական է եզրակացնել, որ գրի ու գրչութեան զարգացման հնարավորութիւններ չկային, որ գիրը և դիրքը ժողովրդի աչքում այն նշանակութիւնը և արժեքը չունեին, ինչ խաղաղ ժամանակներում: Առ. Դավրիժեցիս պարզ գրում է. «Քանզի մինչև ցայս վայր (նախքան Սյունյաց անապատի և մտավորական այլ կենտրոնների հիմնումը՝ մոտավորապես ժէ դարի առաջին երկու տասնամյակները—Վ. Հ.) տգիտութեամբ խոպանացեալ և կորուցեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ զգիրս դիտէին, և ոչ զգորութիւնս գրոց, վասն զի անպիտացեալ էր զիրքն յաշս մարդկան, և իրրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրք՝ լցեալ հողով և մոխրով⁵⁷»: Եվ այստեղ տարօրինակ բան չկա, որովհետև մարդիկ մոլորված քառատեսակ սլատուհասներից, բնավ միջոց չունեին մտածելու իրենց ապրուստի մասին, էլ ուր մնաց, թե ընդօրինակել տային ձեռագրեր: Այդ է պատճառը, որ ժէ դարի առաջին տասնամյակներում բուն Հայաստանում շատ քիչ ձեռագրեր են ընդօրինակվել, այն էլ ասպատակութիւններից և ավերումներից քիչ տուժած վայրերում, մինչդեռ այդ նույն ժամանակ ձեռագրերի ընդօրինակութիւնները գերազանցապես կատարվել են Հայաստանից դուրս՝ հայկական գաղթավայրերում՝ Կ. Պոլիս, Ղրիմ, Լեհաստան, Պարսկաստան և այլն: Բնական է եզրակացնել, որ նման իրավիճակում գրչութեան պայմանները ոչ միայն անկանոն էին, այլև խիստ աննպաստ: Եվ եթե այսօր աշխարհի տարբեր ծագերում ունենք ժէ դարի մի քանի հազարի հասնող հայերեն ձեռագրեր, ապա դա արդյունք է այն ժամանակվա գրիչների անձնազոհութեան, կորույթի և նվիրվածութեան, որոնք քաղաքական և տնտեսական ծանր պայմաններում, հաճախ վատառողջ, կատարել են երախտապարտութեան արժանի մեծ գործ: Իրոք, ինչպիսի պայմաններում էին աշխատում այդ պահին մեր գրիչները: 1611 թ.

⁵⁴ Հմմտ. Առ. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 88:

⁵⁵ № 354 հիշատ.:

⁵⁶ «Միմէնն զպրի Լեհացույ ուղեգրութիւն», հրատ. Ն. Ակինյանի, Վիեննա, 1936, էջ 81:

⁵⁷ Առ. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 255: Մի այլ տեղ՝ նախարանում նույն հեղինակը դժգոհում է, որ պատմութեամբ հետաքրքրվող մարդ չի գտել. «Բայց քանզի աղզս մեր յաւարաբուռաց ե ի գերլաց և ի հարկապահանջողաց ցիր և ցան եղեալ են, կոչկոճեալ և կաշկանդեալ, տառապեալ և կապեալ յազգատութեան որպէս յերկաթս՝ ըստ Սաղմոսին ե հազի. ամենայն ոք գապրուստ իւրոցն կենաց հայթայթէր, ոչ գտաք դիտող այլ այնպիսի, որ դի ընդ պատմութեան և դժուարեան ևս ծանուցեալ էր» («Պատմութիւն», էջ 3):

ընդօրինակած Կանոնագրքի հիշատակարանում Սարգիս գրիչը գրում է. «Նւ իրրե բսկրսայ գրել, վասն ծովացեալ մեղաց իմոց և անարժան գործոց եկըն եհաս սաստաժասաստ բարկութիւնն ի վերայ բրիստոնէից, յանօրէն ազղըն իսմայէլի յարձակեցան և ղոմանրս դերեցին և գայլ ոմանս սըրով կոտորեցին և մընացեալքն փախըստականք... Եւ ես տարակուսեալ ի մէջ վարուսոր ծաւոց դժվար ժամանակիս ատարտում արարի»⁵⁸:

Չեռագրերի առանձին էջերում երբեմն հանդիպում ենք մեկ-երկու տող հիշատակութեան գրչի այս կամ այն արարքի կամ հոգեկան վիճակի մասին, օրինակ, «Անմեղադիր լերուք, ղինչպէս ար է տրտում, շիվար եղ[է], Գ(3) տուն մնաց դատ դատ, շար բնկերի դարդէն»⁵⁹, Գարձյալ շարունակելիւ Լինում էր այնպես, որ մի նոր ձեռագրում նյութերն ընդօրինակելիս մեծ ջանքերով տարբեր վայրերից դասում, բերում էին ղանազան նյութեր և արտագրում: Այդ տեսակետից ուշագրավ է զրավաճառ Աստվածատուրի հաղորդումն իր մի ձեռագրի ստեղծման մասին. «Այս յուշ լիցի ձեզ, հայրք և եղբայրք իմ... վասն այս դըրգիս որչափ նեղութիւն և դառապանք կրեցի մինչև այս կես հասուցի... Բաղում աշխատունք և վիշտս կրեցի մինչև և (30) ամ ոչ հեռացուցի ինձեմէ մինչև հասուցի այսմ կետի... Յայտ իսկ լիցի, այս է որ յառաջ միայն աղաւթաներ, նաև և (30) դուռն առէթ Վանա[յ] բերի, ԺԴ (14) մեծ վիվիւն, և (7) մօլորականի տալսմանեն՝ յԱբղորում դրեցի, ԺԶ (16) մանտր վիվիւ Թոխաթուրերի, ԶԻ (6000)-եակ Մարսվան ասի, բոլորականն, գիսաւոր աստեղըն Փափերթու առի, և (7) մանաղուլի պատկերն լիզմիրու բերի, Հաւախօսն Ըստամպօլ գրեցի, ՀԲ (72) ազդի դիր Կիրիտու բերել տվի Ահա այս է վերայ գրեալ ասացեալ շարչարանքս, այս չափս բաւեցի, իմաստասիրացդ յուշ լիցի»⁶⁰: Այդ առումով բավականին հետաքրքիր է նաև Սղարիա Սասնեցու 1609 թ. հիշատակարանը, ուր սեզեկութիւններ է հաղորդում Կանոնագիրք ձեռք բերելու մասին. «Եւ ի յերկրէ երկիր և գաւառէ ի դաւառ շրջեսլ որոնէի և հարցանէի, և ելեալ ի հայրենի դաւառէս իմոյ՝ ի Սասնոյ... եկի ի... Կոստանդինուպօլիսս: Այստեղ, լսում է, որ Գրիգոր Կեսարացու մտա դանվում է ընդարձակ կանոնագիրք-ձեռագիրք «և յոյժ ուրախացեալ ետու դաղափարել. և ես ջանացի այլ ես աւելուլ և հարստացուցանել... և էր յոլով զրեանք ի Կ. Պօլիս... և ես գտի դորս ի բահանայս և դորս ի յաշխարհակոնս և դորս ի այլազգիս, դոր ոմանք բազում աղաչանօք և ղլետթիք հազիւ տային ինձ վասն նախանձու. և ժողովեցի բազում բանս և ղանապան կանոնս...»⁶¹, Ինչպիսի հեղինակն է հաղորդում այդ աշխատանքները տեւել է 1603—1609 թթ.⁶²:

Ահա այս պայմաններում և նման ջանքերով էին ստեղծվում շատ ձեռագրեր:

Այս ժամանակ աչքի ընկան նշանավոր գրիչներ և ծաղկողներ, օրինակ, Ստեփանոս Թոխաթեցի, Մեսրոպ և Մարտիրոս Հիղանցիներ, Սարգիս Մալման, Սիմէոն Լեհացի, Զաքարիա Վանեցի, Գրիգոր և Նիկոլ Տոմաժիրսքիներ, Ճանդեմիր, Ներսես Մոկացի և ուրիշներ, որոնցից մեզ են հասել երբեմն մեկ տասնյակից ավելի ձեռագրեր: Սակայն սրանց կողքին կան գրիչներ, որոնք սկսնակներ են կամ ինչ-ինչ պատճառներից ելնելով փորձել են ձեռագիրք ընդ-

⁵⁸ № 524 հիշատ.

⁵⁹ № 1002 հիշատ.

⁶⁰ № 554 հիշատ.

⁶¹ № 431 հիշատ.

⁶² Նույն տեղում:

օրինակել: Մաշտոցի անվան մատենադարանի № 8006 կանոնադիրք-ձեռագիրն իր համար դրել է ոմն Սարգիս, որը գրագետ լինելով գրչությամբ չի դբաղվել, իսկ թե ի՞նչու է ընդօրինակել, տալիս է հետաքրքիր և ստույգ բացատրություն. «Սակրս աղքատութեանն զգրչութեանն արուեստատր որ ոչ կոչեցի ի պէտքս հարկիս այսորիկ, ես ինձէն իմովրս անյօժարութեամբ և մեծաչան աշխատութեամբ ըսկիսքն արարի...»⁶³,

Վերևում բերեցինք փաստեր գրչության պայմանների մասին: Հետաքրքրությունից զուրկ չեն նաև գրիչներին վերաբերող տեղեկությունները: Հաճախ թեև ծեր կամ հիվանդ, բայց նրանք ձեռագիր ստեղծել են սիրով և նվիրվածությամբ: Ղազար Թոխաթեցին 1606 թ. գրած հիշատակարանի վերջում ներողություն է խնդրում գրի խոշորության և սխալներ լինելու համար. «Քանդի յոյժ կարի հիւանդ էի ի սրտէ ցաւէ»⁶⁴, Լղարակ գյուղում (Արցախ) գրած Ավետարանի հիշատակարանում գրիչը նույն ձևով ներողություն է խնդրում. «Ձի նուագեալ էր զարութիւն մարմնոյս, և ի աչացս լոյսն պակասեալ, զի շէշմաւ գրէի»⁶⁵, Մեկ ուրիշը ձեռագրի մի անկյունում գրել է. «Ախ ինչ կու ընիմ՝ ոտիցքս մինչ ի գլուխս շէ առողջ, զամն է պատել զիս»⁶⁶,

Մեղ հետաքրքրող ժամանակամիջոցում զգալի թիվ են կազմում այն հիշատակարանները, որոնք վերաբերում են ձեռագրերը գերությունից ազատելուն կամ սրանց վերանորոգման աշխատանքներին: Հաճախ այդ հիշատակարաններում չի նշվում գումարը և բավականանում են նշել, «հալալ վաստակոց իւրոց» արտահայտությամբ, բայց հանդիպում են հիշատակարաններ, ուր նշված է որոշակի գումար, օրինակ, ոմն Աստվածատուր մեր Մատենադարանի № 910 Մաշտոցը «առաւ ի գերութենէ ԲԹ (2000) դիան»⁶⁷: Քանի որ խոսք բացվեց գերությունից ձեռագրերի ազատագրման մասին, ապա հետաքրքիր է իմանալ ձեռագրերի առուծախի մասին եղած տեղեկությունները տարբեր վայրերում, օրինակ, Ստեփանոս Թոխաթեցին իր ընդօրինակած Հայսմավուրքը (մեր Մատենադարանում, № 7377) 1611 թ. Կաֆայում վաճառում է 50 ոսկով⁶⁸: Մեկ ուրիշը 1611 թ. Մատենադարանի № 10021 Ավետարանը դնում է 5000 դեկանի⁶⁹, իսկ № 898 Մաշտոցը 1619 թ. ծախվում է 2000 դեկանի⁷⁰: № 10326 Հայսմավուրքը 1607 թ. վաճառվել է 40 ֆլորի⁷¹: Առավել հետաքրքիր է 1608 թ. Սյունիքի Ատրենիս գյուղում վաճառված № 970 Մաշտոցի գինը. «Ա(1) Ե[գն] ||| Ա(1) հորդն հետն կով՝ Թ(1000) դեկանի, Ա(1) կաթնատոյ ոչխար ||| էծ, Բ(2) սոմար ցորէն՝ սոմար ԲԹ (2000) դեկան»⁷²,

Հիշատակարաններից մի քանիսում պահվել է տեղեկություն գրչի վարձի մասին. «Ձտետրն ԺՁ (16) շահի՝ Ը(8) ինձ, Ը(8) տէր Յակոբին»⁷³: Մատենադարանի № 8254 Մաշտոցի գրիչ Պողոսին վարձ են տվել. «Ձտէր Ձաքարիայն... Մ(50) ըստակ, Նորպարոն՝ Մ(50) ըստակ, Շամշատին՝ Մ(50) ստակ, Սարխոշն՝

63 № 524 հիշատ. 1
 64 № 287 հիշատ. 1
 65 № 990 հիշատ. 1
 66 № 1002 հիշատ. 1
 67 № 248 հիշատ. 1
 68 № 521 հիշատ. 1
 69 № 526 հիշատ. 1
 70 № 923 հիշատ. 1
 71 № 323 հիշատ. 1
 72 № 355 հիշատ. 1
 73 965 հիշատ. 1

մի հիշատակարանում հանդիպում ենք նման մի տեղեկության, ուր հիշվում է, որ, ավանարար Ախլցիուայում, մահտեսի Յայլան «նորոգեաց ժամատուն Ս. Նշանիս, որ էր ակրեալ ի անօրինաց շատ ժամանակաւ»⁸⁰, ինչպես տեսնում ենք. իոսսր վերաբերում է ավերվածի վերականգնմանը:

Հիշատակարանները, իհարկե, միայն պատմական փաստալից արձակ վավերագրեր չեն ժամանակի քաղաքական, սոցիալ-տնտեսական կամ մշակութային առանձին հարցերի լուսաբանման համար: Կան ժամանակի քաղաքական եղևություններ, որոնք տրված են չափածո, թեև վերջիններս չեն փայլում իրենց գեղարվեստական արժանիքներով: Ստեփանոս Թոխաթեցին մեզ հետարբորող շրջանի բեղուն գրիչներից մեկն է ևղել: Նա ազատվել է ջալալիների ոարսափներից և ապաստան գտել Կաֆայում, ուր 1607 թ. ընդօրինակելով մի Գանձարան, հիշատակարանում թողել է Թոխաթի նկարագրությունը մինչև ջալալիների ասպատակությունը և դրանից հետո: Բերենք մի հատված այդ չափածոյից.

«Շատ գեղարեայք շէն, բարելի,
Այգով, արտով, պաղչով իլի,
Ջրով առատ բոյս բանջարի,
Եղեմ դրախտին էր նըմանի:
Գետըն նըման էր Երբաաի,
Որ Թաւաղաւ նա անուանի,
Բերէր գերան, սիւնըս շէնքի,
Ջկոճ և ըղփայարս վառելի:
Եւ ըղմիւս գետն քաղօրին միջի,
Յամէն պարտէզ նովօ ջըրվի,
Եւ դձեւմակ ջուրըն կըրկնակի,
Աղրերքն անտի կու բաժանի»⁸¹:

Ջերմ շնչով և ապա թախծով է գրված հեղինակի հայրենի քաղաքի շենության և ավերման նկարագրությունը: Իսկ Ազարիա Սասնեցին, կարելի է ասել, պատմական մի պոեմ է գրել ջալալիների ասպատակությունների մասին սկզբից մինչև 1611 թվականի ժամանակամիջոցը: Ահա նրա չափածոյի մի հատվածը.

«Ջգիւղ՝ և դքաւաքրս աւերեալ,
Ջարս և զկանայս գերի տարեալ,
Ջորքս և զայրիս ոչ խնայեալ,
Ջհարուստ, դաղքատ սրոյ անցուցեալ,
Ջծեր և զտղայ ոչ ողորմեալ,
Ջիւրոց դրաստ և զինչս առեալ:
Եւ որք այսպէս անողորմ լիեալ,
Անագորոյն սիրտ քարացեալ,
Նոցա մեծն պատիւ տվեալ,
Հաղարապետ զնոսա կարգեալ»⁸²:

⁸⁰ № 932 հիշատ.

⁸¹ № 315 հիշատ.

⁸² № 549 հիշատ.

Ս(50) ստակ, վարդան՝ Ս(50) ստակ, Գրիգորն՝ Լ(30) ստակ, Սալվիարն՝ Լ(30) ստակ, Թորոսն՝ Խ(40) ստակ, Փիրումն՝ Լ(30) ստակ... Խաչատուրն ժ(10) ստակ⁷⁴: Ընդամենը 390 ստակ: Ըստ Լրևույթին՝ զրչության վարձ վաղևր սովյալ պահին մեկ մարդու ուժերից վեր է եղել:

Հիշատակարաններում կան բազմաթիվ տեղեկություններ Լիկեղեցիների և վանքերի նվիրատվության մասին: Մարդիկ նվիրում էին ոչ միայն ձեռագրեր, եկեղեցական սպասներ, այլև վարելահող, այգի, ջրաղաց, սուրճ և այլն. ահա նման հիշատակարաններից մեկը. «Աստուած ողորմի ըոէս Խալիֆին, Աստուած զիւր մեղքն թողնի, որ զՃէմի արան հետ ձորոյն ի ներքին դեհ, մատ ի ճաբահ, Մլքի հող ոհվ հտուր, Բ(2) ար ջուրն ի հետ տըրին»⁷⁵: Այս սովորությունը զալիս է հնից, սակայն խիստ ուշադրավ է, երբ Լիկեղեցուն նվիրում են մարդու ձեռքը՝ աշխատուժը. Մատենադարանի № 4721 Հայամավորքում (1606 թ.) կարդում ենք. «Գարձեալ արհնէ սէր Աստուած ուսթայ Շաղաւթն... որ ձևն ոխ արար է(7) ժամատան»⁷⁶, Մի այլ հիշատակարանում՝ 1611 թվին Հայսմավորքի հետագա ստացող մահտեսի Արիպչանը թովմա առարչալի վանքին այլ նվերների թվում էլ յամէն տարի հովիւ մի ոխֆ արար»⁷⁷: Երկու դեպքում էլ հողերը հաստատությունը աշխատանքային ուժն է նվիրվում, առաջինում՝ հանդես է դալիս աշխատողի կամավոր մշտական կախվածությունը եկեղեցուց, երկրորդում՝ վարձու աշխատանքի՝ աշխատողի ակամա և ժամանակավոր նվիրում:

Ասեցինք, որ պատերազմների և ջալալիների ասպատակությունների ժամանակ ընկալության մի մասին ենթարկում էին ղերևվարության: Հիշատակարաններից մեկում՝ 1604 թ., պահվել է տեղեկություն ղերվածների վաճառքի մասին. «Տարան (ղերիններին —Վ. Հ.) ի բաղարն Գանձակայ, վաճառեցին որդիքն ի վեր[այ] հարցն, կինն ի վերայ յայրոն, որն ճ(100) մարչիլ, որն Ս(50), այլ աւել և պակաս»⁷⁸:

Իհարկե, հիշատակարաններում եղած տեղեկությունները չեն սահմանափակվում բուն Հայաստանով: Կան բազմաթիվ տեղեկություններ ղաղթավայրերի հայերի նոր ղանդվածների և ընդհանրապես հայ ղաղթավայրերի մասին:

Սույն ժողովածուի հիշատակարաններում կան այլ ընդթի տեղեկություններ ևս, օրինակ, հիշվում են մի շարք արհեստների անուններ՝ կոշկակար (կարուակ), ոսկերիչ, պալտառ, հացթուխ, դարբին և այլն: Իսկ 1611 թ. մի հիշատակարանում հիշվում է ղրավաճառ Աստվածատուր⁷⁹: Հիշատակարաններում կան նոր կամ բիչ հայտնի տեղանուններ՝ Ըռչնիկ, Հոկան, Ջնուկ, Խալիֆ, Լղարակ, Ծնկիդյուղ, Բարիձոր, Մաշկաղղակ, Առընդեղ, Հողե և այլն:

Տեղեկությունների հանդիպում ենք բնական երևույթների, պատահարների և այլ դիպվածների, օրինակ, արևի և լուսնի խավարման, ղիսավոր սուսղի երևման, մահտարածամի մասին և այլն:

Շինարարական աշխատանքների մասին, իհարկե, խոսք լինել ղի կարող, բանի որ ժողովուրդը լողում էր սեփական արյան մեջ: Միայն մի-երկու հիշատակարաններում խոսվում է վերանորոգման աշխատանքների մասին: 1619 թ.

⁷⁴ № 215 հիշատ.:

⁷⁵ № 208, հմմտ. № 515:

⁷⁶ № 254 հիշատ.:

⁷⁷ № 533 հիշատ.:

⁷⁸ № 166 հիշատ.:

⁷⁹ № 554 հիշատ.:

այստեղ կատարում ենք այլ ձևի հաշվում, օրինակ, հիշատակարաններից մեկում կարգում ենք. «Ի թվականիս ՌԿՔ հոկտեմբերի ԻԷ»⁸⁶: Բանն այն է, որ շարժական տոմարի հաշվով Հայոց ՌԿՔ թվականը սկսվում է 1612 թ. հոկտեմբերի 19-ին և ավարտվում է 1613 թ. հոկտեմբերի 18-ին: Ուրեմն Հայոց ՌԿՔ թվականի հոկտեմբերի 27-ը կընկնի ոչ թե 1613 թ., այլ 1612 թ. մեջ. նման դեպքերում մեր հաշվումները տրված են Լճի ներքևի ծանոթագրություններում:

Հիշատակարաններում գրչի անունը և գրչության թվականը երբեմն տրրված են զանազան ծածկադրերով, որոնք վերծանված են:

Հիշատակարանների բովանդակած բաղձապիսի և հաբուստ նյութը դիտական նշանակություն ունենալուց բացի, ունի նաև քաղաքական ու դաստիարակչական նշանակություն: Ընթերցողը ծանոթանալով գրանց, նույնիսկ առանց հատուկ ուսումնասիրության, կարող է պատկերացում ունենալ մեր ժողովրդի պատմության հզոր ժամանակին այս շրջանի վերաբերյալ և մտավիճակներ, թե ինչպիսի արյունաթափախ մղձավանջների հաղթարամյա խաղաղից հետո, հայ ժողովրդի մի հատվածը կարողացավ դուրս գալ նոր այգուրաց և կառուցել իր լուսավոր ասպարհ: Եվ մենք՝ ժամանակակիցներս շնորհ կարող նպարտությունք շնչել գրիչների, ծաղկողների երախտապարտության և շնորհակալության արժանի այն մեծ գործը, որ նրանք այդ դառը օրերի համառոտ և բեկբեկուն պատմությունն իրենց գրություններում թողեցին սերունդներին:

Առվեց, որ հիշատակարաններն իրենց պարունակած հարուստ և հավաստի տեղեկություններով վաղուց են գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Սակայն Հայաստանի տարբեր մասերում գտնվող ձեռագրերի հիշատակարանների ի մի հավաքումը սկսվեց ԺԹ դարի 70-ական թվականներին Ղ. Փիրզալեմյանի կողմից: Այդ ժողովածուներն այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում⁸⁷: Ձեռագրերի նկարագրությունն կատարել է նաև Գ. Սըրվանձաջյանը, բերելով հիշատակարանները, որոնք նա հրատարակել է «Թորոս տղբար Հայաստանի ճանապարհորդ» աշխատության երկու հատորներում (1879 թ. և 1895 թ. Կ. Պոլսում): Եթե նկատի ունենանք, որ ԺԹ դարի վերջերից մինչև 1915—1920 թթ. սուլթանական Թուրքիայի հայահալած ու հայաջինջ պետական բաղադրականության հետևանքով ոչնչացան հաղթարավոր ձեռագրեր, այսպե՛ս երկու երախտավորների կազմած ժողովածուներում ընդգրկված նյութերն իրենց թերություններով հանդերձ⁸⁸ ստանում են բնագրի նշանակություն:

Հետագայում Հ. Տաշյանի հետևողությունները կազմեցին տարբեր վայրերում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակներ, մեծ մասը հրատարակված, մնացածն անտիպ, որտեղ բերված են նաև հիշատակարանները:

Հիշատակարանների առաջին ժողովածուն հրատարակել է Ղ. Փիրզալեմյանը «Նոստրա Հայոց»-ում անցյալ դարի 80-ական թվականներին: Նյութն

⁸⁶ № 569 հիշատ.

⁸⁷ № 6332, 4515, 6273 և 4442.

⁸⁸ Լ. Խաչիկյանն իր «ԺԹ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները ժողովածուում մանրամասն խոսում է Ղ. Փիրզալեմյանի և Գ. Սըրվանձաջյանի կատարած աշխատանքի թերությունների մասին, ուստի այստեղ շեք անդրադառնալով դրանց: Կարգա նշված աշխատության Առաջարանի XXIII—XXIV էջերը:

Հակառակ չափածոներին, կան հիշատակարաններ, որոնք գեղարվեստական արձակի արժեք ունեն։ Ահա նման հիշատակարանից մի հատված, ուր հեղինակն իր ասելիքը հյուսելով Լրեմյական ուլբի սգուն, գրում է. «Բոլոր Հայաստան ամենայն ցիր և ցան հղեն։ Ոմանք բըքահեղձ, ոմանք ղեսատար, ոմանք սովամահ, ոմանք դաղանակեր, ոմանք սրով փողոտեալ, օրինօք ոչ խնկեալ և պատանեալ, քահանայիք և սարկաւաօր ոչ հաղորդեալ և ամփոփեալ, այլ ղթաղումն իշոյ առին իբրև ղգէշ ղաղանաց, ի փողոցի անկեալ ըստ մարդարէին։ Եւ տեսցեն ղոսկերս արանցն յանցուցելոցն առ իս։ Ասորեստան և Պարսկաստան և երկիրն այլաղգեաց հղեն Հայոց ղերեղման։ Ո տայր ղըլխոյ իմոյ ջուր և աչաց իմոց աղբերս արտասուաց, ղի լայի և սգայի ղրեկումն ժողովրդեան իմոյ, որք ի մեղս մեռան և որք ղերի վարեցան և ի հաւատոցն ուրացան»⁸³,

Ուսումնասիրության նյութ կարող է տալ հիշատակարանների լեզուն, որը ժամանակի դրական և խոսակցական լեզուն է, հաճախ էլ ունենալով բարբառային խոսքի տարրեր։ Ահա նման մի հատված, գրված 1603 թ. «Եւ ղիս ղանարժան ղՍտեփանոս Էրէցս բռնեցին է(7) հոգի և շոքեցուցին, և հանեալ ղչալախ թուրն կամէին քիշտել ղշիւնքս։ Եւ մի ոմն ի նոցանէ ասէ. «Եկայր թուֆանկով նշան ղնինք»։ Եւ այլն սկսան ղչալախ թրի յետեով ձեծել, թէ «Մեղ մանչ և ըռակ ցըցուր»։ Եւ յետոյ տարեալ ի տուն մի և կապեցին ղձեռն ի յետև և կախեցին այնպէս, որ թևերս շիտկեցաւ. և առեալ Բ(2) հոգին հաստ բրօք այնչափ հարին, որ ձայնս հատու և շուանն կարեցաւ. և անկա ի բարձրութենէն ի վայր, և խելքս անցէր էր, և նոքա թողեալ ղնացեր էն, թէ «Քաշիշն մեռաւ»⁸⁴,

Հիշատակարաններում տեղեկություններ կան առանձին Լեզուիթյունների ժամանակագրական ստույգ տարին կամ օրը որոշելու համար։ Այստեղ հանդիպում ենք նաև ժէ դարի նշանավոր կամ քիչ հայտնի դործիչների մասին փաստերի։ Մի քանի հիշատակարաններում տրված են առանձին անձնավորությունների կենսագրական մանրամասնություններ, որոնք ուշագրավ են և հետաքրքիր։

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում տոմարին վերաբերող վկայությունները։ Հիշատակարաններում տարեթիվը տրված են հայկական մեծ թվականի հաշվով, առենք, Հայոց ՌԾԹ թիվը, սրան դումարելով 551, կոտանանք մեզ հետաքրքրող տարին, այսպես՝ 1059 (ՌԾԹ)+551=1610 թ.։ Սակայն լինում են դեպքեր, երբ տարեթիվը տրված է այլ տոմարական թվերի հետ ղուղահեռ, այս դեպքում մեր ելակետը դարձյալ Հայոց թվականն է։ Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժէ դարում հետևել են դերաղանցապես շարժական տոմարին, օրինակ, հիշատակարաններից մեկում գրված է. «Ի թվականիս Հայոց ՌԿԶ (1617)՝ ահկի ամսոյն ԻԲ (22), աւրն կիրակի»⁸⁵, Հայոց ՌԿԶ-ի ահկի 22-ը շարժական տոմարի հաշվով կհամապատասխանի 1617 թ. հուլիսի 6-ին և այդ օրն էլ իրոք կիրակի է։

Իհարկե, միշտ չէ, որ Հայոց մեծ թվականին ավելացնում ենք 551 և գրտնում մեզ հետաքրքրող տարեթիվը։ Հարցը կարելի է լուծել այդպես, երբ չի տրված ամսաթիվը։ Այն դեպքում, երբ տարեթիվի հետ տրված է ամսաթիվը,

⁸³ Ձ 354 հիշատ.

⁸⁴ Ձ 154 հիշատ.

⁸⁵ Ձ 824 հիշատ.

այստեղ դասավորված է ժամանակագրական կարգով 1393—1467 թթ.։ Այնուհետև Ղ. Ալիշանը «Կամեննից»-ում (Վենետիկ, 1896 թ.) մի քանի ժամանակագրությունների և այլ նյութերի հետ հրատարակեց Լեհաստանի և Ուկրաինայի հայ դաղթավայրերին վերաբերող 1394—1740 թվականներն ընդգրկող հիշատակարաններ, նման աշխատանք, բայց գիտական պատշաճ մակարդակով կատարել է նշանավոր հայագետ Գ. Հովսեփյանը «Հիշատակարանք ձեռագրաց» (Անթրիաս, 1951 թ.) ստվար ժողովածուում, ընդգրկելով Ե դարից մինչև 1250 թթ. գրված հիշատակարանները։

Վերջին քսանամյակում Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ հրատարակվեցին ԺԴ և ԺԵ դարերի հիշատակարանների մեծածավալ ժողովածուները⁸⁹, որոնք իրեն մատչելի աղբյուրներից օգտվելով կաղմել է հմուտ բանասեր-պատմաբան Լ. Խաչիկյանը։

ԺԶ դարի հիշատակարանների ժողովածուի սույն և հաջորդ հատորները հանդիսանում են նշված աշխատանքների շարունակությունը։ ԺԶ դարի հիշատակարանների ժողովածուն կաղմելու աշխատանքները տարիներ առաջ սկսել էր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը և կիսատ թողել։ Մենք շարունակել և ավարտելու ենք այն։ Ներկա հատորն ընդգրկում է 1601—1620 թթ. հիշատակարանները։ Նյութերը քաղված են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հարուստ հավաքածուից, հայերեն ձեռագրերի ցուցակներից (սուված և անտիպ), մամուլից, գիտական հանդեսներից և առանձին աշխատություններից, ինչպես նաև մի շարք վայրերից՝ Լենինգրադ, Երուսաղեմ, Վենետիկ, ստացված առանձին ձեռագրերի մանրաժայռակներին։ Սույն հատորի համար օգտագործված աղբյուրների ցանկը ներկայացնում ենք ներքևում։

Այժմ մեր կատարած աշխատանքի մասին։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից հիշատակարանները քաղել ենք ըստ այդ ձեռագրերի Ցուցակի համապատասխան ցանկերի, որոնք նախքան տպագրվելը մեզ էր արամադրել Մատենադարանի գիտաշխատակից Օնիկ Եզանյանը։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրերից նյութեր սկզբնապես հավաքեցինք Ա. Սյուրմեյանի (հտ. Ա) և Ն. Պողարյանի (հտ. Բ—Ե) կաղմած Ցուցակի հատորներից։ Սակայն հետադաշում վերջինս նոր ձեռագրերի նկարագրություն ավելացնելով Ցուցակի հինգ հատորներն երկրորդ անգամ հրատարակեց Երեք հատորներով։ Այստեղ ներկայացված նյութերը, որոնք նշված են ՄՅՁԵՊ, I, ՄՅՁԵՊ, II, և ՄՅՁԵՊ, III, վերցրել ենք Ցուցակի երկրորդ հրատարակությունից⁹⁰։ Դրանից հետո նոր ձեռ-երի նկարագրություններով լույս տեսավ IV, V և VI հատորները, որոնցից վերցրած նյութերը ներկայացված են ՄՅՁԵՊ, IV, ՄՅՁԵՊ, V և ՄՅՁԵՊ, VI նշումով։

Մովսես Տեր-Մովսիսյանի հայերեն ձեռագրերի ընդհանուր Ցուցակը նախապես գտնվում էր Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում, իսկ այժմ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան ձեռագրաց ցուցակների ֆոնդում։ Ձեռագրերի նկարագրությունը դասավորված է ըստ բովանդակության առանձին թղթապանակներում, օրինակ, մի հատուկ թղթա-

⁸⁹ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» Երևան, 1950, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մասն Ա, Երևան, 1955, նույնի մասն Բ, Երևան, 1958, նույնի մասն Գ, Երևան, 1967։

⁹⁰ Հնարավոր շփոթումից խուսափելու նպատակով երկրորդ հրատարակությունից վերցրած համապատասխան հիշատակարանների հասցեների մոտ առաջին հրատարակության վրա հղում չենք կատարել։

դանակում են գտնվում Շարահնացիները, մեկ ուրիշում՝ Սաղմոսարանները, երկուսում՝ Ավետարանները և այլն: Այստեղից վերցված նյութերը նշել ենք այսպես.

Շարահնացի կամ ճաշոց և կամ Աւետարան
Մագիսարոս, № 356 Մագիսարոս, № 229 Մագիսարոս, II, № 2232

Այսինքն՝ Մովսէս Տեր Մովսիսյանի (Մագիսարոս) Յուդայի Շարահնոց թղթագանակի № 356 ձևադիրը կամ նույնի ճաշոց թղթագանակի № 229 ձևադիրը և կամ նույնի Ավետարան 2-րդ թղթագանակի № 2232 ձևադիրը և այլն:

Փողովածուն կազմելիս ասանձին լրացումներով հետևել ենք է. Խաչիկյանի կազմած ժողովածուների կառուցվածքին: Հիշատակարանները դասավորված են ժամանակագրական կարգով և յուրաքանչյուրն ունի իր հերթական համարը՝ 1-ից մինչև 1041⁹¹: Փամանակագրական կարգի մեջ նախ տրված են անտիոլ, իսկ այնուհետև տրված հիշատակարանները: Վերջիններս զբաղված են ձևադրի ընդօրինակության ավարտման տարեթվի ներքո, անկախ այն բանից, թե ընդօրինակությունը քանի տարի է տեղի ունեցել և քանի հիշատակարաններ կան նախորդ մտակառույցի: Հիշատակարանի հերթական համարի տեղ տրված է ձևադրի անունը, որից բաղված է հիշատակարանը, օրինակ, Աւետարան. Մաշտոց, Նարեկ և այլն: Սրա տեղ համառոտ տրված է ձևադրի հասցեն, որտեղից վերցրել ենք սովորյալ հիշատակարանը, օրինակ, Երևան, № 334, կամ ՅՁՎՍ, II, № 283: Առաջին դեպքում նշանակում է հիշատակարանը վերցված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 334 ձևադրից, երկրորդ դեպքում՝ Բարսեղ Սարգիսյանի Վենետիկի Միսիթարյանների մատենադարանի ձևադրերի Յուդայի II հատորի 283 համարի ձևադրից: Համար է պատահում, որ ձևադրի հասցեի մոտ, կրթի փակագծերում նշված են տարեթվեր կամ դարեր: Գրանք վերաբերում են սովորյալ ձևադրի ընդօրինակության ժամանակին. օրինակ, № 1-ին հիշատակարանի համար նշված է. «Երևան, № 334 (1493 թ. առաջ)» կամ № 2-րդը «Երևան, № 379 (ԺԲ դար)»: Առաջին դեպքում նշանակում է՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 334 ձևադրին ընդօրինակվել է 1493 թ. առաջ, իսկ երկրորդ դեպքում՝ նույն Մատենադարանի № 379 ձևադիրը ԺԲ դարի է: Հիշատակարանի հասցեի աջ անկյունում տրված են ձևադրի գրչի, ծաղկողի ընդօրինակության վաչքի, պատվիրատուի կամ ձևադրի նորոգողի, կազմողի, հետագա ստացողի, նվիրատուի և գերութունից աղաչողի անունները: Այնուհետև բերվում է հիշատակարանը կիսի նույն տարեթվին զբաղված է մի քանի հիշատակարան ձևադրի տարբեր էջերում կամ նույն թերթում զբաղված են գրչի, ծաղկողի կամ ստացողի հիշատակարանները, ապա դրանք միմյանցից անջատել ենք հայերեն տառերով՝ ա, բ, գ, դ, ե և այլն:

Հրատարակության էջի ձախ մասում նշված թվերը ցույց են տալիս աղբյուրից վերցրած էջերը, իսկ երբ էջը փոխվում է, զբաղված են ուղղահայաց երկու գծեր՝ //, իսկ նույն տողի դիմաց, ձախ յուրանցում նոր էջահամար: Ի՞նչ

⁹¹ Հատորն իրականում ընդգրկում է 1038 հիշատակարաններ: Բանն այն է, որ 121, 141 և 825 համարների հիշատակարաններն անուշագրության պատճառով համապատասխանաբար կրկնվել են 132, 157 և 850 համարների ներքո, որոնք համառոտ են և բաղված են տարբեր աղբյուրներից:

մի հիշատակարան տուվել է մեկ և ավելի անգամ և այդ հիշատակարանի իսկական բնագրից վերցրել ենք նույնը, ապա սույն հատորում տպագրում ենք վերջինս, իսկ նախկին հրատարակության (թյունների) մասին համառոտված տեղեկացնում ենք հիշատակարանի հասցեի մոտ կամ տողատակի ծանոթագրություններում: Իսկ եթե միևնույն հիշատակարանը գտնվում է անտիպ մի րանի Ցուցակներում, սրանց տեղը ևս նշվում է նման ձևով: Այստեղ միակ բացառությունը կատարել ենք Մ. Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) Ցուցակի հետ, որովհետև եթե այդպես վարվեինք, ապա գրեթե բոլորի մոտ այն պետք է նըշվեր:

Հիշատակարանների սկզբում եղած «Փառք»-երը, որոնք պատմական արժև շունեն և շատ հաճախ կանոնականացված ընդարձակ բանաձևեր են, չենք վերցրել: Չենք վերցրել նաև սովյալ հիշատակարանում կրկնվող միևնույն անձնանունների խումբը, ընդարձակ մաղթանքները և անեծքները, գրչի ինքնախարազանման կամ ստորացման, պատվիրատուի րարեմասնությունների դովարանման, ձեռագրերի՝ Ավետարան, Շարականոց և այլնի դովբի կրկարաշուն: սուղերը: Ձեռագրերի թե՛ տուված, թե՛ անտիպ Ցուցակներում և այլուր հիշատակարաններում կատարված կրճատումները արտահայտված են կրեք կետերով: Դրանք կատարել են Ցուցակների կամ ձեռագրերի նկարագրության հեղինակները:

Հիշատակարանները բերված են նույնությամբ՝ ուահելով ուղղապարտությունը: Միայն փոփոխված է ձեռագրերից քաղված բնագրերի կետագրությունը, որովհետև գրիչների մոտ այն խիստ անկանոն է:

Առանձին գեպրերում, կրք հիշատակարանը աղբյուրագիտական, բանասիրական և առհասարակ պատմագիտական որևէ արժև չի ներկայացնում, այգպիսիները չենք վերցրել: օրինակ, մեր Մասենագատրանի № 4834 ձեռագրի 1-ին պահանակի ա էջում գրված է. «Թվին ՌՄԱ աշակերտեցայ ևս անարժանս, սկիզբն ամսոյ հոռի», «Կատարնցու գիրքս ի թվին ՌԿԹ (1620), սեպտեմբեր ամսոյն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (ՄՅՁԵՊ, V, № 1601, էջ 395), «Նսրոգեցաւ սք. Աւետարանս ի թվին ՌԿԳ (1614)», (Մուրմար, II, № 50, էջ 136) և այլն:

Ձեռագրերի մասին տեղեկություններ և հիշատակարաններ հրատարակվել են ժամանակի պարբերական մամուլում: Մի քանի դեպքերում առանձին պարբերականների որոշ համարներ, որտեղ կան նման նյութեր, ձեռք բերել չկարողացանք, օրինակ «Հայաստան» 1846 թ., № 14, 1852 թ., № 98, 101, 107, «Սուրհանգակ» 1900 թ., № 317, 1906 թ., №№ 2383, 2394 և այլն:

Երբ բնագրում եղծված, անընթեռնելի, չնջված տեղեր կան, սույն հաստորում զրանք նշել ենք երեք ուղղահայաց գծերով՝ |||: Երբ բնագրում բառի մեջ մի տառ տվել է գրված կամ տառասխալ է, դրանք նշել ենք շեղատառ, իսկ երբ կրկնված են, մեկ և ավելի բառեր, դրանք էլ նշել ենք սուրանկյուն փակագծերում՝ <>: Պատահում է, որ մի տառ կամ մի բառ բաց է թողնված կամ բնագիրը մաշված է այնպես, որ մնացած մասով կարելի է վերականգնել տառը կամ բառը. նման գեպրերում վերականգնված տառը կամ բառը վերցրել ենք ուղղանկյուն փակագծերում՝ []:

Հիշատակարանում քանակն արտահայտել են հայերեն տառերով: Այստեղ դրանց կողքին կլոր փակագծերում տվել ենք յուրաքանչյուրի համարժեքն արաբական թվանշաններով, օրինակ ԻԳ (23) և այլն: Երբեմն որոշակի տարեթիվ ունեցող հիշատակարանների հետ ձեռագրերում հանդիպում ենք ան-

թվական հիշատակարանների, Դրանցից այնպիսիները, որ կարող են մոտ լինել տարևթիվ ունեցող հիշատակարաններին, դրել ենք վերջիններիս՝ հետ, նշելով առանձին համարի տակ, օրինակ, ա, բ, գ և այլն:

Հիշատակարանների շարքում կա այսպիսի ոչում՝ № 9027/31, № 6333/471, Համարիչ ցույց տվող թվերը նշանակում են Մաշտոցի անվան մասնադարանի № 9027 ձեռագիրը՝ Ղ. Փիրղալեմյանի հավաքած նյութերի մի այլ ժողովածուն և № 6333 ձեռագիրը՝ Բարդամի հավաքած Վասպուրականի ձեռագրերի հիշատակարանների ժողովածուն: Իսկ հայտարարները ցույց են առաջի առ ժողովածուների մեջ մտած նյութերի հերթական համարները:

Բնագրերին անհրաժեշտ ծանոթագրություններ տրված են տողատակ, որոնք ունեն դուռ բանասիրական, բնագրական, տոմարական և կամ մասամբ աղբյուրագիտական նշանակություն: Հատորը շնորհաբեռնելու նպատակով խուսափել ենք առանձին հարցերի պատմական պատճառը տալուց: Ղ. Փիրղալեմյանը «Նշխարք»-ի Ա և Բ հատորների բնագրերում կատարել է նշումներ, որոնք մեծ մասամբ ունեն ծանոթագրությունների բնույթ կամ լրացումներ են և կամ ուղղումներ: Այս երկու հատորներից վերցրած բնագրերից հանել ենք դրանք, որոնք անհրաժեշտության դեպքում հեղինակի անունով օգտագործել ենք սուղատակի ծանոթագրություններում:

Մի շարք հարցերի՝ տոմարական, աշխարհագրական պարզաբանման համար օգտագործել ենք տեղեկատու գրականություն, որը տեղում ամեն անգամ չենք նշել: Դրանք հետևյալ աշխատություններն են.

1. Բ. Ե. Թումանյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965:

2. Տօնացույց, հ. Ա, Բ, Երուսաղեմ, 1915:

3. Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Բ, Վենետիկ, 1902, 1907:

Հայերեն ձեռագրերի համապատասխան հիշատակարանները հավաքելու նպատակով Կարեն Յուզրաշյանը, Սամսոն Լալաֆարյանը և Նուբար Միքայելյանը իրենց կազմած հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակները սիրով արամադրեցին մեզ: Բանասեր Բաբկեն Զուգասզյանը 1972 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներից հայերեն մի շարք ձեռագրերի նկարագրություններ բերելով Ժէ դարի հիշատակարանները հանձնեց մեզ, որի մասին կնշվի համապատասխան հիշատակարանների ծանոթագրություններում: Ընկերներին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրատան ավանդապահներ Օ. Ս. Եզանյանին, Ա. Ս. Մաթևոսյանին, աշխատակցուհիներ Ա. Տ. Ավալյանին, Գ. Վ. Բաբայանին, Գ. Ա. Գրիգորյանին և մյուսներին, որոնք տարիներ շարունակ Մատենադարանում տարվող մեր աշխատանքներին ցույց են տվել սիրալիր օժանդակություն:

Վերջում կուզենայինք նշել հետևյալը. սույն ժողովածուն մեծածավալ աղբյուրագիտական գործ է: Ժողովածուի նյութերը ցրված են ոչ միայն տարբեր վայրերում գտնվող ձեռագրերում, որոնք ցուցակները տակավին լրիվ չեն հրատարակված, այլև մասնավոր հավաքածուներում, պարբերականներում և դանազան աշխատություններում: Կազմողները գիտակցում են, որ Ժէ դարի առաջին քսան տարվա բոլոր հիշատակարաններն այստեղ ամփոփված չեն: Անշուշտ կլինեն բացթողումներ և այլ կարգի վրիպումներ: Ուստի շնորհակալությամբ կընդունեն մասնագետների քննադատական դիտողությունները հետագա հատորներում դրանցից խուսափելու նպատակով:

Վ. Ա. ՀԱՎՈՐՅԱՆ